



## ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

### ՀԱՄԱՌՈՑ ԼՈՒՐԵՐ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ

ՀՈԿՏԵՐԵՐՅԱՆ ՌԵՎՈՅՈՒՑԻԱՅԻ 37-ՐԴ ՏԱՐԵԴԱՐ-  
ՁԻ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ.—Նոյեմ-  
բերի 7-ին լրացավ Հոկտեմբերյան Սոցիալիստական  
Մեծ ռեւոլյուցիայի 37-րդ տարեդարձը:

Սովետական Հայաստանի աշխատավորները, Սովե-  
տական Միության բոլոր ժողովուրդների հետ միասին,  
այդ պանծալի տարեդարձը նշեցին մեծ խանդավառու-  
թյամբ, որպես համաժողովրդական ցնծալի տոն: Այդ  
տոնակատարությամբ հայ ժողովուրդը մեկ անգամ ևս  
գրեց իր անսահման նվիրվածությունը դեպի Մեծ  
Հոկտեմբերի դաշտավայրերը, դեպի սովետական կար-  
գերը, որոնց շնորհիվ մեր բազմաշառչ ժողովուրդը  
ձեռք բերեց ազգային վերածնության և անկախության  
հնարավորություն, իր երկիրը վերաշինելու և առաջ  
մղելու հնարավորություն:

Նոյեմբերի 6-ին, տոնի նախօրյակին, Երևանում,  
Ալեքսանդր Սպենդիարյանի անվան օպերային թատ-  
րոնում տեղի ունեցավ աշխատավորների դեպուտատնե-  
րի Երևանի քաղաքային Սովետի հանդիսավոր նիստը,  
մասնակցությամբ սովետական և հասարակական  
կազմակերպությունների ներկայացուցիչների՝ նվիրված  
Հոկտեմբերյան ռեւոլյուցիայի 37-րդ տարեդարձին:  
Նիստին եկել էին քաղաքի արդյունաբերական ձեռ-  
նարկությունների աշխատողներ, արվեստի, գրակա-  
նության, կուլտուրայի և գիտության գործիչներ, Սո-  
վետական բանակի ներկայացուցիչներ, պետական  
գործիչներ:

Հանդիսավոր նիստը բացեց Երևանի քաղաքային  
Սովետի գործադիր կոմիտեի նախագահ Բարգեն  
Ասավաթաթյանը:

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռեւոլյուցիայի  
37-րդ տարեդարձի մասին զեկուցումով հանդես եկավ  
Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետի նախագահ  
տեղակալ Բ. Մարտիրոսյանը:

Նիստը բացվելուց և փակվելուց առաջ կատարվեց  
Սովետական Միության Պետական Հիմնը:

Հանդիսավոր նիստից հետո կայացավ ճոխ համերգ:

Հաջորդ օրը, նոյեմբերի 7-ին, Երևանում, Լենինի  
հրապարակում հասարակայնության լայն խավերի  
ներկայությամբ տեղի ունեցավ Երևանի կայազորի  
գորամասերի զորահանդես և ապա մայրաքաղաքի աշ-  
խատավորների շքերթ, որը տեղի ունեցավ Երևանի  
Շքերթին մասնակցեցին քաղաքի արդյունաբերական  
ձեռնարկությունների և նորակառույցների բազմա-  
զար աշխատավորներ, ծառայողներ, արվեստի, գի-  
տության և կուլտուրայի գործիչներ:

Երեկոյան տեղի ունեցավ տոնական հրավառություն:  
Հոկտեմբերյան տարեդարձը մեծ խանդավառու-  
թյամբ տոնեցին Լենինականի, Կիրովականի, Ալավեր-  
դու, Ղափանի, Գորիսի, Իջևանի, Էջմիածնի, Հոկտեմ-  
բերյանի, Ստեփանավանի և մյուս շրջանների աշխա-  
տավորները:

Նոյեմբերի 6-ին, տոնի առթիվ, Լենինականում հան-  
դիսավոր կերպով բացվեց Վ. Ի. Լենինի մոնումենտալ  
հուշարձանը՝ կերտված քաղալու քարից:

ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ԵՐԵՎԱՆԻ ՆՎԻՐՎԱԾ ԱՐԱՆԻԱՅԻ ԱԶԱ-  
ՏԱԳՐՈՒԹՅԱՆ 10-ԱՄՑԱԿԻՆ.— Նոյեմբերի 17-ին,  
Երևանում, Ալեքսանդր Սպենդիարյանի անվան օպե-  
րային թատրոնի շենքում կայացավ հանդիսավոր երե-  
կո՝ նվիրված Ալեքսանիայի ազատագրության 10-րդ  
տարեդարձին: Երեկոն կազմակերպվել էր Արտասահ-  
մանի հետ կուլտուրական կապի Հայկական ընկերու-  
թյան, Հայաստանի արհեստագիտական միությունների  
խորհրդի և խաղաղության պաշտպանության ռեսպու-  
բլիկական կոմիտեի կողմից:

Թատրոնի դահլիճը, որը զարդարված էր Ալեքսան-  
կան ժողովրդական Ռեսպուբլիկայի և Սովետական  
Հայաստանի պետական դրոշներով, լիկ-լիցուն էր հա-  
սարակայնությամբ: Երեկոյին ներկա էր Սովետական  
Միության հետ Ալեքսանիայի բարեկամության ընկերու-  
թյան պատվիրակությունը՝ Ալեքսիայի ժողովրդական  
Ռեսպուբլիկայի Մինիստրների խորհրդի նախագահի  
տեղակալ Մանուշ Մյուսթիսի գլխավորությամբ:



ներածական խոսքով երևին բացեց Արտասահմանի հետ կուլտուրական կապի Հայկական ընկերության վարչության նախագահ, գրող Գ. Սեպուհյանը։ Նվազախումբը կատարեց Ալբանական Ժողովրդական Ռեսպուբլիկայի և Սովետական Հայաստանի Պետական Հիմները։

Ալբանական Ժողովրդական Ռեսպուբլիկայի տասնամյա նվաճումների մասին զեկուցում տվեց Սովետական Հայաստանի Մինիստրների Սովետի նախագահի տեղակալ Ա. Շեկոյանը։

Ալբանական հանգուստ եկավ Մանուշ Մյուֆթիուն, որին ներկա եղողները դիմավորեցին երկարատե ծափահարությամբ։ Նա ալբանական ժողովրդի և կառավարության անունից շնորհակալ ուղղունց ներկա եղողներին, ինչպես և ամբողջ հայ ժողովրդին, ապա նշեց Ալբանիայի ու Սովետական Միության բարեկամության ամրապնդման կարևորությունը՝ Ալբանական Ժողովրդական Ռեսպուբլիկայի հետագա բարգավաճման համար։

Բառերնի ֆոնելում բացված էր ցուցահանգես՝ նվիրված Ալբանիայի նվաճումներին։

ՀԱՆՐԱՊԵՏՈՒՄ ԲԱՆԱՍՏԵՂՄ ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ՀՆՏ.— Վերջերս Երևանի ուսումնական մանկավարժական ինստիտուտի (որն ունի հսկայական օտար լեզուների բաժին) ուսանողներին ու դասախոսները հանդիպում ունեցան մեծանուն բանաստեղծ Ավետիս Իսահակյանի հետ։ Հանդիպման երեկոն կազմակերպված էր Սովետական Հայաստանի Գերագույն Սովետի նիստերի դահլիճում։ Ընդարձակ դահլիճը լիկ-լեցուն էր։ Ֆիլոլոգիական գիտությունների դոկտոր պրոֆեսոր Հ. Ղաֆաջյանը զեկուցեց բանաստեղծի կյանքի և ստեղծագործական ուղու մասին։ Ալբանական ելույթ ունեցան ինստիտուտի մի շարք դասախոսներ, որոնք զբաղառեցին Ավետիս Իսահակյանին, որպես ժամանակակից խոշորագույն բանաստեղծի, որի ստեղծագործությունները թարգմանված են աշխարհի շատ լեզուներով։

Ինստիտուտի ուսանողները կարդացին մեծ բանաստեղծի ստեղծագործություններից հատվածներ հայերեն, ռուսերեն, վրացերեն, ադրբեջաներեն, գերմաներեն, անգլերեն լեզուներով։

Վերջում Ավետիս Իսահակյանը շնորհակալություն հայտնեց իրեն ցույց տրված բնորոշելության համար։

Ինստիտուտի ուսանողական գիտական ընկերության որոշմամբ Ավետիս Իսահակյանի ընտրված է հիշյալ ընկերության պատվավոր անդամ։

ԲՅՈՒՐԱԿԱՆԻ ԱՍՏՂԱԴԻՏԱՐԱՆԸ.— Աշտարակի շրջանի Բյուրական գյուղում, Արագածի ստորոտին, կառուցվում է Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի նոր աստղադիտարանը։ Աստղադիտարանը գրավում է մոտ 10 հեկտար տարածություն։ Ենթերի մի մասի շինարարությունն ավարտված է, իսկ մյուս մասի շինարարությունը կավարտվի առաջիկա տարիներին։ Կառուցված են մի քանի լաբորատորիաներ, որոնք կահավորված են միանգամայն նոր, առավել կատարելագործված գործիքներով, աստղադիտարանի

զվտավոր շենքը, մի քանի պալիլեոններ, երեք գիտաաշտարակներ, մի շարք բնակելի շենքեր աստղադիտարանի աշխատողներին համար։ Հայաստանի աստղադիտարանը, մեծանուն գիտնական Վ. Համբարձումյանի ղեկավարությամբ, իրենց գիտական աշխատանքները հիմնականում կենտրոնացրել են այստեղ։

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՐՏԻՍՏ ՎԱՂԱՐՇ ՎԱՂԱՐՇՅԱՆԻ ՀՈՐԵԼՅԱՆԸ.— Հոկտեմբերի 25-ին Երևանի հասարակայնությունը նշեց սովետահայ բեմի ակադեմիկոս գործիչներից մեկի՝ Սովետական Միության Ժողովրդական արտիստ Վաղարշ Վաղարշյանի ծննդյան 60-ամյա և բեմական գործունեության 40-ամյա հոբելյանը։ Այդ առթիվ Գարբիկ Սունդուկյանի անվան պետական դրամատիկ թատրոնում կայացավ հոբելյանական հանդիսավոր երեկո։ Երեկոն բացեց Հայաստանի թատերական ընկերության նախագահ, պրոֆեսոր Վ. Վարդանյանը։ Հոբելյարի կյանքի և բեմական ու հասարակական գործունեության մասին զեկուցումով հանգես եկավ ֆիլոլոգիական գիտությունների թեկնածու Ս. Հարությունյանը։

Զեկուցողը նշեց, որ Վ. Վաղարշյանի անունը սերտորեն կապված է սովետահայ թատրոնի պատմության հետ։ Իր 40-ամյա գործունեության ընթացքում Վ. Վաղարշյանը հանգես է եկել որպես դերասան, ռեժիսոր, դրամատուրգ, մանկավարժ, հասարակական գործիչ։ Նա կերտել է ավելի քան 100 բեմական կերպարներ։

Հոբելյարին ողջունեցին Հայաստանի Կուլտուրայի մինիստրության, Երևանի, Բարձի, Բրիլիսիի թատրոնների ու հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները։ Վ. Վաղարշյանի անունով ստացվել էին ողջունի բազմաթիվ հեռագրեր Սովետական Միության զանազան վայրերից։

Վերջում շնորհակալական խոսքով հանգես եկավ հոբելյարը, որին ներկա եղողներն ընդունեցին շնորհակալ։

ՀԱՄԱԳԻՏԱԿԱՆ ՊԵՂՈՒՄՆԵՐ.— Ավարտվեցին Լժբաթավանքի պեղման աշխատանքները, որը կատարում էր Հայաստանի Մինիստրների Սովետին կից ճարտարապետական գործերի վարչությունը։ Հողի հաստ շերտից ազատված են վանքի պատերը, որոնք կառուցված են սրբատաշ տուֆով։

Լժբաթավանքը 7-րդ դարի հայկական ճարտարապետական կոթողներից մեկն է, գտնվում է Արթիկից ոչ հեռու։ Նա աչքի է ընկնում իր ճարտարապետական յուրօրինակությամբ, հիմնալի համաշխարհային։ Նա մեկն է 7-րդ դարի այն հուշարձաններից, որոնք հիանալի պահպանվել են։

Պեղումները ցույց տվին, որ Լժբաթավանքի կուրը նախկինում ծածկված է եղել կղմինդրով, իսկ հետագայում, երբ վանքը ենթարկվել է վերակառուցման, ծածկը փոխարինվել է քարե սալիկներով։ Այս փաստը հաստատում է հնագետների այն ենթադրությունը, որ հայկական բոլոր հին շենքերի կուրերը ծածկվելիս են եղել կղմինդրով, և որ քարե սալիկները սկսել են գործածել ավելի ուշ։



ներկայումս աշխատանքներ են տարվում վերականգնելու հուշարձանը: Վերանորոգվում է գմբեթը, պատերի մի մասը, զարդագոտին և այլն:

**ՌԵՄԱՐԱՆՏԻ ՀԻՇՏԱՆԱԿԻՆ.**— Հուլանդական հուշավոր գեղանկարիչ Ռեմբրանտ վան-Ռեյնի մահվան 285-ամյակի կապակցությամբ, որը լրացավ սույն թվականի հոկտեմբերի կեսերին, Երևանում, Արվեստի աշխատողների տանը, տեղի ունեցավ երեկո: Նկարչական-թատերական ինստիտուտի դասախոս Ն. Ստեփանյանը իր զեկուցումով ներկա եղողներին ծանոթացրեց մեծ նկարչի կյանքին և գործունեությանը: Նա նշեց, որ Ռեմբրանտը եղել է իր ժամանակի ամենաառաջվոր մարդկանցից մեկը Նվիրվածություն և նկարչական իր հանճարեղ գործերով հարստացրել է արվեստի համաշխարհային գանձարանը: Վերջում ներկա եղողները դիտեցին «Ռեմբրանտի կյանքը» կինոնկարը:

**ԵՎԵԴԱՅԻ ՌԻՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ.**— Հոկտեմբերի կեսերին Երևանում մի քանի օրով հյուր եղավ շվեդացի ուսուցիչների պատվիրակությունը, որը ՍՍՌՄ էր ժամանել ծանոթանալու կրթական գործի զրվածքին: Փաղաքի տեսարժան վայրերը, թանգարաններն ու կուլտուրական այլ հաստատությունները դիտելուց հետո, հյուրերը եղան հանրակրթական և արհեստագործական դպրոցներում, գրադեք թվում նաև Արտաշատի շրջանի Նորաշեն գյուղի 10-ամյա դպրոցում, ուր մանրամասն ծանոթացան ուսումնական և դաստիարակչական գործին: Ի պատիվ պատվիրակության Հայաստանի լուսավորության մինիստր Ս. Միքայելյանը կազմակերպեց ընդունելություն:

Մեկնելուց առաջ պատվիրակության անդամ տիկին Ա. Էդստամը հայտարարեց.

— Սովետական Միության մեջ կրթական սխտեմը ամենուրեք միեմունքն է և մատուց սերնդի դաստիարակության գործը կայուն հիմքերի վրա է դրված: Մեզ պարմանք է պատճառում այն, որ շատ գյուղերում գործում են միջնակարգ դպրոցներ:

Պատվիրակության ղեկավար պարոն Ակսենսն ասաց. — Հայաստանը ամենայն հոգատարությամբ պահպանելով իր հին կուլտուրան, մեծագույն ջանքեր է գործ դնում նրա հետագա զարգացման համար՝ հոգուտ մեր ժամանակի պահանջներին բավարարման:

**ՀԱՅԿԱԿԱՆ ՆՈՐ ԲԱԼԵՏ.**— Մոսկվայի կոնսերվատորիայի ասպիրանտ Է. Հովհաննիսյանը գրել է հայկական նոր բալետ, որը կոչվում է «Մարմար»: Դա երիտասարդ կոմպոզիտորի առաջին խոշոր գործն է, որի ստեղծման վրա նա աշխատել է ավելի քան մեկ տարի: Հեղինակն իր ստեղծագործության համար օգտագործել է հայկական երգերն ու երաժշտությունը, տալով բալետին հերթաթային բնույթ:

Վերջերս Երևանի Ալեքսանդր Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնի գեղարվեստական խորհուրդը, քաղաքի երաժշտական հասարակացության մասնակցությամբ, լսեց նոր բալետի երաժշտությունը, որը ներկա եղողների կողմից արժանացավ դրական

գնահատականի: Թատրոնի գեղարվեստական խորհուրդը որոշեց բալետը մտցնել թատրոնի խաղացանկի մեջ:

**ՆՈՐ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ ՀՐԱԶԴԻՆ ԳԵՏԻ ՎՐԱ.**— Գյումուշի խոշոր ջրային էլեկտրակայանի կառուցումը ավարտելուց հետո, սույն թվականի սեպտեմբերին ձևանարկվեց մի նոր էլեկտրակայանի շինարարությանը՝ Արզնի գյուղից ոչ հեռու Արզնիի կայանը մեկն է Հրազդանի վրա կառուցվելիք էլեկտրակայաններից, և իր մեծությամբ կլինի գործող շորրորդ խոշոր կայանը: Ներկայումս շինարարական աշխատանքները ծավալված են ամբողջ թափով: Կառուցվում են ամբարտակը, ջրանցքը, տունները, բանվորական ավանները, ճառագարները, օժանդակ շենքեր, արհեստանոցներ և այլն: Շինարարական աշխատանքները գրեթե ամբողջովին մեթենայացված են:

Արզնիի էլեկտրակայանի շինարարության ավարտումով զգալի չափով կավելանա Հայաստանի գործող էլեկտրակայանների հզորությունը: Բացի այդ, հնարավորություն կստեղծվի կայանի ջրավազանի միջոցով Հրազդանի ջրերի մի մասը բաց թողնել Արզնի-Շամի-Ջրաջրանցքը և ոռոգել մի քանի տասնյակ հազար հեկտար անչրդի հողեր Աշտարակի շրջանում:

**ՆՈՐ ԱՅԳԻՆԵՐ.**— Խաղողագործությունը և պտղաբուծությունը հանդիսանում են Հայաստանի գյուղատնտեսության բարձր եկամտաբեր ճյուղերից մեկը: Խաղողի այգիները գրավում են ուեսպորիկայում մշակվող կուլտուրաների ընդհանուր տարածության միայն 2,2 տոկոսը: Սակայն անցյալ տարի կոնկրետ տնտեսություններն իրենց ընդհանուր եկամտի մոտ 20 տոկոսը ստացան այգիներից:

Տարեցտարի ընդարձակվում է ինչպես խաղողի, այնպես էլ պտղատու այգիների տարածությունը: Անցյալ տարի Հայաստանում գցվել են 480 հեկտար խաղողի և 870 հեկտար պտղատու այգիներ: Այս տարի աշնանը խաղողի նորատունկ այգիների տարածությունը կավելանա 520, իսկ պտղատու այգիների տարածությունը՝ 680 հեկտարով: Բացի Արարատյան դաշտավայրից, այգեգործությանը զարկ է տրվում Նոյեմբերյանի, Այալբերդու, Իջևանի, Կոտայքի, Աղիգեղովի, Գորիսի և մի քանի այլ շրջաններում:

**ԹԵԿԿԱԿԱՆ ՌԻՍՈՒՄՆԱՐԱՆ.**— Այս ուսումնական տարվանից Կիրովականի մանկաբարձական և բույրական դպրոցը վեր է ածվել ուսումնարանի: Գոյություն ունեցող մանկաբարձական և բույրական բաժիններից բացի, բացված է բուժակների պատրաստման բաժին: Վերջին 5 տարում դպրոցն ավարտել են 400 բժշկական քուլրեր և մանկաբարձուհիներ: 1953-1954 ուսումնական տարում դպրոցն ավարտել են 111 հոգի, որոնց բոլորն էլ աշխատանքի են ուղարկվել Հայաստանի շրջաններում գործող բուժական հիմնարկները:

**ՏԵՆԻՍԿԱԿԱՆ ՌԻՍՈՒՄՆԱՐԱՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ.**— 1954-1955 ուսումնական տարվանից Երևանում բացվել է տեխնիկական ուսումնարան, որտեղ սովորում են 150



հողի: Ուսման տեղությունը սահմանված է 2 տարի: Ուսումնարանը պատրաստելու է արդյունաբերական ձեռնարկությունների համար միջին կարգի մասնագետներ՝ գծագրիչներ, խառատներ, փականագործներ, մեքենավարներ և այլն: Հանրակրթական առարկաներից բացի ավանդվելու են մասնագիտական գիտելիքներ: Բոլոր սովորողները ապահովված են թոշակով:

**ԳՈՐԾԱՐԱՆԱՅԻՆ ԱՎԱՆԸ.** Այնտեղ, ուր այժմ գտնվում է Կիրովականի բիմիական գործարանը, 20 տարի առաջ ամառի տարածություն էր: Գործարանի հետ միասին աճել է մի ավան, որն իր մեծությամբ ներկայումս հավասար է Կիրովականի գրեթե կես մասին: Բարեկարգ, լայն փողոցների երկու կողմերում բարձրացել են բազմահարկ գեղեցիկ շենքեր: Ավանի ունի իր կուլտուրական և առողջապահական հաստատությունները, կենցաղային հարմարությունները: Ամեն տարի պետությունը խոշոր միջոցներ է ծախում գործարանային ավանի բարեկարգման, հատկապես բնակարանային շինարարության համար: Ընթացիկ տարում այդ նպատակի համար ծախսվել է շուրջ 4.000.000 ռուբլի: Կառուցվել են մի շարք նոր բնակելի շենքեր, որոնք կունենան ավելի քան 100 բնակարան:

**ՋԵՐՄՈՒԿ ԿՈՒՐՈՐՏՈՒՄ.** Նոյեմբերի 1-ին Հայաստանի լավագույն հանքային բուժիչ ջրերի կուրորտում փակվեց բուժման քննադիտարկում տարվա շրջանը: Ամառվա քննաքննում այստեղ բուժվել են 2.800 հիվանդներ, սրտից թվում շատերը եկել էին Մոսկովայից, Լենինգրադից, Խարկովից, Տաշքենդից և Սովետական Միության այլ վայրերից:

Ձմռան ամիսներին Ջերմուկում կշարունակվեն շինարարական և բարեկարգման աշխատանքները: Ընդարձակվելու են հիվանդանոցային շենքերը, ավարտվելու է հանքային ջրերի գործարանի, ջուր խմելու սրահի, կենցաղային և կուլտուրական մի քանի շենքերի կառուցումը:

**ՀԱՆՔԱՅԻՆ ՋՐԻ ՆՈՐ ԱՂՐՅՈՒՐ.** Ախիանի շրջանի Ուռուտ գյուղի մոտ երկրաբանները հայտնաբերել են հանքային ջրի ժայթքող աղբյուր՝ մի քանի տասնյակ մետր խորությամբ: Ջուրն ունի 27 աստիճան ջերմություն: Իր բաղադրությամբ այդ ջուրը շատ նման է Ջերմուկի ջրերին:

Ուռուտ գյուղը թեպետ գտնվում է ծովի մակերևույթից 1.350 մետր բարձրության վրա, ավելի ցածր է, քան Ջերմուկ կուրորտը: Հետևապես սրտի հիվանդությամբ տառապողների համար այստեղ ավելի նպաստավոր է բուժում ստանալ:

**ՀԱՅԻ ՆՈՐ ԳՈՐԾԱՐԱՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ.** Երևանում կառուցվում է հացի նոր խոշոր գործարան: Այն կարող է օրական արտադրել մինչև 60 տոննա հաց և այլ թխվածքներ: Գործարանը կահավորվելու է նորագույն մեքենաներով, որոնց միջոցով մեքենայացվելու են բոլոր աշխատանքները: Նոր գործարանը կլինի հացի հինգերորդ գործարանը Երևանում: Միաժամանակ ավելացվում է մյուս գործարանների արտադրական կարողությունը: Այդ նպատակով տեղադրվում են ավելի հզոր և կատարելագործված մեքենաներ ու սարքեր:

**ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԸ ՄՏԱՆՈՒՄ ԵՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ.** Երևանի Անասնաբուժական-անասնաբուժական ինստիտուտին կից գոյություն ունի հեռակա ուսուցման բաժանմունք: Այս բաժանմունքում, առանց իրենց հիմնական զբաղմունքից կտրվելու, սովորում են ավելի քան 400 հոգի: Նրանք բոլորն էլ գյուղական կոլեկտիվ տնտեսությունների նախագահներ են, անասնապահներ, կրտսեր անասնաբույժներ և այլ զբաղմունքի տեր մարդիկ, որոնք աշխատում են Հայաստանի տարբեր շրջաններում:

Այս տարի հեռակա բաժանմունքի առաջին կուրսն ընդունվել են 129 հոգի: Այժմ 4-րդ և 5-րդ կուրսերի հեռակայողների համար անց են կացվում սեսիոն քննություններ: Սկզբ տարվա մարտին 5-րդ կուրսի ուսանողները կպաշտպանեն իրենց դիպլոմային աշխատանքները և կհանձնեն պետական քննություններ:

Գյուղատնտեսության աշխատանքների համար հեռակա ուսուցման բաժանմունք կա նաև Երևանի Գյուղատնտեսական ինստիտուտին կից:

**ԹԱՏԵՐԱԿԱՆ ԻՆՔՆԱԳՈՐԾ ԽՄԲԵՐԻ ՍՏՈՒԳԱՏԵՍ.** Սույն թվականի հոկտեմբեր ամսին ռեսպուբլիկայում անց կացվեց գյուղական, գործարանային և շրջանային աղյուսների ու կուլտուրայի տներին կից գործող թատերական ինքնագործ խմբերի ստուգատես, որի նպատակն էր զարկ տալ աշխատավորների զեղարվեստական ինքնագործունեությանը: Ստուգատեսին մասնակցեցին 467 ինքնագործ թատերական խմբեր, շուրջ 4.000 կատարողներով: Վերջում 46 լավագույն խմբեր հանդես եկան Երևանում, ստուգատեսն անցկացնող ռեսպուբլիկական հանձնաժողովի առաջ:

Դրանցից լավագույն հանաչվեց Ղուկասյանի շրջանային կուլտուրայի տան թատերական ինքնագործ խումբը, որին շնորհվեց առաջին կարգի մրցանակ և 6.000 ռուբլի գրամական պարգև:

